

Ագդարարության Trumpet's Sound փող

55-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ԶՈՎՏԵՄԲԵՐ 2024



Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ ԵՐԿԱՄՍՅԱ ՔԵՐՔՐ ԵՒՂՆԵՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՄՆԵՐ Է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաստատուն կանգնածՀովիվ՝ Հրաչ Գույունյան

Արի՛, Տե՛ր ՀիսուսՆեյլ Բուբման

Հովնան. սխալ փափագով մարդ (2)Դոն Սթորմր

Ապաշխարություն. շրջվել՝ Աստծուն
հետևելու համար (2)Ջորջ Հաուբ

Չենք ուզում եղբայրներ, որ անգետ լինեքՔաղված

Առաքելություն Ավետարանի հետԴոկտ.՝ Դանիել Ջեյմս

Արի՛, Տե՛ր Հիսուս

«Այս ամենի մասին վկայություն տվողն ասում է. «Այո՛, շուտով Ես կգամ»:
Ամեն՛, արի՛, Տե՛ր Հիսուս» (Հայտ. 22:20)

Սիրելի աշակերտ Հովհաննեսն ընդամենը երեք բառով արտահայտեց իր սրտի փափագը: Ակսած նրազակալների իր առաջին տեսիլքից մինչև բարկության, Հարսի և Աստծո ու Գառնուկի գահից բխող Կենաց գետի վերջին տեսիլքը՝ Հովհաննեսը բացականցում է իր սրտագին փափագը. «Արի՛, Տե՛ր Հիսուս»:

Դա ենթադրություն չէր: Հովհաննեսը չէր ասում Տիրոջը, թե երբ գա: Հոր կողմից նշանակված այդ օրվա ու ժամի մասին նույնիսկ Ինքը՝ Որդին չգիտեր Իր երկրային կյանքի ընթացքում: Հովհաննեսը չէր կարող իմանալ, թե երբ է մտնելու «հեթանոսների լիությունը», ոչ էլ թե երբ կփակվի փրկության դուռը: Նա վստահում էր ամբողջ երկրի Աստծուն՝ բոլորի Դատավորին, որ Նա ճիշտ կանի:

Այս խոսքի մեջ փայլում է Հովհաննեսի սրտի փափագը, նրա մեծ կարոտը դեպի Տերը: Եվ սա տեսնելով՝ մեր պարտականությունն է թույլ տալ, որ Աստծո Խոսքը հայելի լինի մեր իսկ հոգիների համար: Կարո՞ղ ենք բոլորս միանալ Հովհաննեսին և անկեղծ արտով աղաղակել. «Արի՛, Տե՛ր Հիսուս»:

Ես ակնկալում եմ, որ դուք, ինչպես և ես, լսել եք, որ մարդիկ ասում են, թե իրենք դեռ չեն ուզում, որ Տերը գա: Հնարավոր է՝ դուք էլ ինչոր ժամանակ այդպես եք ուզել: Սովորաբար տարբեր պատճառներ են բերվում, բայց հաճախ չուզելը պարզապես այն պատճառով է, որ նրանք անպատրաստ են Նրա գալստյան համար: Մյուսները գուցե ավելի գնահատում են աշխարհիկ անցողիկ հաճույքները, քան Փրկչին հանդիպելը: Բայց ինչ էլ որ լինի պատճառաբանությունը, մենք գիտենք, որ Հովհաննեսի սիրտն ու փափագը հոգևոր առողջության նշան է, և դա մեզ պատճառ և հնարավորություն է տալիս՝ մտածելու սեփական հոգևոր վիճակի մասին:

Երկու պատճառ կա, թե ինչու մարդիկ կարող են իրենց անպատրաստ զգալ Տիրոջ գալուստի համար:

Առաջինն այն է, որ նրանք չեն վստահում Տեր Հիսուսի ավարտած գործին, Նրա մահվանն ու հարությանը, այլ փոխարենը որոշ չափով վստահում են սեփական գործերին կամ ենթադրած արժանիքներին որպես հիմք Աստծո մոտ ընդունվելու համար: Մենք չունենք արժանիքներ, որոնք մեզ Աստծո մոտ ընդունելի կդարձնեն, և ոչ մի բարի գործ երբեք չի կարող մեր առջև բացել դրախտի դուռը: Միակ ամուր հիմքը հարուցյալ Փրկչի հանդեպ հավատքն է, որի առատ շնորհն ու զարմանալի սերը հարատև խաղաղություն են բերում մեր սրտերին:

Երկրորդ պատճառը խիղճը մեղքով արատավորելն է: Հովհաննեսը գրեց, որ եթե ասենք, թե մեղք չունենք, ինքներս մեզ խաբում ենք (Ա Հովհ. 1:8): Բայց նաև գրեց, որ եթե խոստովանենք մեր մեղքը, ապա Տերը կների ու կմաքրի մեզ ամեն անիրավությունից (Ա Հովհ. 1:9): Երբ մեր խիղճը տագնապում է, մենք չպետք է թույլ տանք, որ Քրիստոսի արյան գործության և Աստծո Խոսքի ճշմարտացիության հանդեպ կասկածները շարունակեն մնալ մեր սրտում: Մենք պետք է արագ խոստովանենք մեր մեղքերը և վերականգնենք մեր խաղաղությունը Տիրոջ հետ:

Մենք տխրում ենք՝ տեսնելով մարդկանց սրտերի խավարը և այն տառապանքը, որն առաջանում է դրանից: Մենք աղաղակում ենք. «Արի՛, Տե՛ր Հիսուս»: Մենք փափագում ենք ազատվել մեր մեղավոր բնությունից և բոլոր սրբերի հետ մեկտեղ հանգստանալ Նրա փառքի արևի տակ: Ամենից շատ մենք փափաքում ենք Փառքի Տիրոջը, Խաղաղության Իշխանին, Թագավորների Թագավորին, Փեսայի դեմքը տեսնելուն:

«Արի՛, Տե՛ր Հիսուս»:

Նեյլ Բուրման



«Ես եմ կենաց հացը. ո՛վ որ Ինձ գա երբե՛ք չպիտի անոթենա, և ո՛վ Ինձ հավատա՛, երբե՛ք չպիտի ծարավի»:

Հովհ. 6:35

Հովնան. սխալ փափագով մարդ

Հովնանը մարգարե էր, ով ապրում էր Իսրայելի հյուսիսային թագավորությունում Եղիայի և Եղիսեի ժամանակներից հետո: Նրա մարգարեություններից մեկը կատարվում է Հերոբոլամ II-ի օրոք (ԳԹագ. 14:25): Եթե մենք ավելին գիտենք Հովնանի, քան որոշ այլ մարգարեների մասին, դա այն պատճառով է, որ նրա ուղերձը սերտորեն կապված էր իր կյանքի հետ:

Աստված Հովնանին Նինվե ուղարկեց՝ գալիք դատաստանի մասին մարդկանց նախագուշացնելու համար: Հովնանը չհնազանդվեց Աստծուն՝ հակառակ ուղղությամբ գնալով: Նրան երկրորդ հնարավորությունն ընձեռվեց: Հովնանը հնազանդվեց, բայց գոհ չմնաց իր քարոզչության արդյունքով: Երբ մարդիկ ապաշխարեցին, Աստված գործեց Իր էության համաձայն ու ներեց նրանց: Հովնանը պետք է մի կարևոր դաս սովորեր. Աստված կարելից է, ով ուրախանում է ողորմությամբ: Ինչ-որ իմաստով Հովնանն իր իսկ մարգարեության ուղերձն է: Բայց ո՞րն է այս պատմության նախապատմությունը:

Ասորեստանը որոշ ժամանակ եղել է աշխարհի գլխավոր տերությունը, սակայն ժամանակավոր անկման շեմին հայտնվեց Իսրայելի Հերոբոլամ II-ի և Հուդայի Ռզիա թագավորի կառավարման ժամանակ: Սա մասամբ ներքին կռիվների և մասամբ Ասորեստանի հյուսիսում գտնվող ազգերի ճնշման պատճառով էր: Սակայն սա միայն ժամանակավոր հետընթաց էր: Մի քանի տարի հետո Ասորեստանը վերադարձավ համաշխարհային բեմի կենտրոն և կրկին հաղթեց շրջակա շատ ազգերի: Ասորիները շատ դաժան էին, և նրանց նվաճած ժողովուրդը շատ էր տուժում, շատ ծանր վիճակում էր: Հովնանը՝ որպես հայրենասեր իսրայելացի, հաճույք կզգար՝ տեսնելով Ասորեստանի ձախողությունը: Իրենց դաժանության պատճառով ասորիները սակավաթիվ կողմնակիցներ ունեին:

Հովնանի առաջադրանքը

Աստված Հովնանին հանձնարարեց նախագուշացնել Նինվեին Աստծո դատաստանի մասին: Հովնանի արձագանքը Նինվեից որքան

հնարավոր է հեռու գնայն էր: Նա մտադրություն չունեի Աստծո նախագգուշացումը Նինվե տանելու, քանի որ գիտեր, որ եթե մարդիկ ապաշխարեն, Աստված չի իրականացնի այն պատիժը, որը նախատեսել է քաղաքի համար: Քանի որ Ասորեստանն այդ ժամանակ Իսրայելի բնական թշնամին էր, վերջին բանը, ինչ Հովնանը ցանկանում էր տեսնել, Աստծո՝ նրանց հանդեպ ողորմած լինելն էր: Մարդկային տեսանկյունից Հովնանի արձագանքը բնական էր: Ասորիների դաժանությունը չափ ու սահման չունեի, և բոլոր ազգերը վախենում էին նրանց հետ պատերազմում պարտվելու հետևանքներից: Բայց արդյոք սա ճիշտ վերաբերմունք էր Տիրոջ մարգարեի կողմից. դա արդեն հարցի մյուս կողմն է:

Հովնանն անհնազանդ գտնվեց. հյուսիս-արևելք գնալու փոխարեն գնաց արևմուտք: Նա հատուկ փախչում էր Տիրոջ ներկայությունից: Նա չգիտեր Մադ. 139:37-ի ճշմարտացիությունը, որտեղ սաղմոսերգուն հարցրեց, թե ուր կարող է գնալ Աստծո ներկայությունից: Տիրոջից փախչելով՝ Հովնանը գնաց Հոպպե, գտավ մի նավ, որը գնում էր Թարսիս, վճարեց ուղեվարձը մինչև նավը բարձրանալը:

Քանի որ նա կարծում էր, թե կարող է փախչել Տիրոջ ներկայությունից, չհնազանդվեց Աստծո պատվիրանին: Այդ անհնազանդությունը և հետագա գործողությունները հակադրվում են Աստծուն, որը գործում է գերիշխան գործությամբ: Հովնանի անհնազանդությունը չէին կարողանում հասկանալ նաև հեթանոս նավաստիները:

Կարելի է պատկերացնել նավաստիների վախը, երբ նրանք իմացան, որ Հովնանը ծառայում է երկնքի Աստծուն՝ Եհովային, և փախչում է Նրանից: Նրանք չէին համարձակի անել մի բան, որն իրենց աստվածներին տհաճություն կպատճառեր, բայց ահա մեկը, ով չէր հնազանդվում երկինքն ու երկիրը ստեղծողին:

Երկրորդ գլխում արձանագրված է Հովնանի աղոթքը ծովի խորքերից, ինչպես նաև փրկվելուց հետո նրա մտորումները: Նա ընդունեց, որ Աստված լսել է իրեն Շեոլի որովայնից և ազատել: Իր նեղության մեջ նա Տիրոջը կանչեց և իր ուխտը նորոգեց: Չարմանալի է, թե ինչու ավելի շուտ չենք կանչում Տիրոջը, այլ սպասում ենք մինչև որ խորը դժվարությունների մեջ հայտնվենք, ու նոր սկսենք աղոթել:

Երբ Հովնանը երկրորդ անգամ հանձնարարություն ստացավ Նինվե գնալու, նա հնազանդվեց ու ակննատես եղավ պատմության մեծագույն արթնություններից մեկին: Մարդիկ՝ սկսած գահի վրա նըստած թագավորից մինչև ստորին խավի քաղաքացին, անկեղծորեն ապաշխարությամբ դիմեցին Տիրոջը: Բայց Հովնանը հեռու էր երջանիկ լինելուց: Նա չէր ուզում տեսնել, թե ինչպես է Տերը ողորմում ասորիներից որևէ մեկին: Նա բողոքեց Տիրոջը Նրա շնորհի, ողորմության և սիրառատ բարության համար, հետո նստեց իր պատրաստած տաղավարում՝ տեսնելու, թե ինչ է լինելու քաղաքի հետ:

Հենց այնտեղ Տերը Հովնանին շատ կարևոր դասեր սովորեցրեց: Հովնանը շատ զայրացավ, երբ նրան սովեր սովող դղմենին չորացավ որդի պատճառով: Նա տրտմեց մի բույսի համար, որն ինքը չէր ստեղծել: Արդյո՞ք ճիշտ չէր, որ Աստված տրտմեր Իր իսկ ստեղծած մարդկանց կործանման համար: Մենք գիտենք, որ Նա ավելի մեծ մտահոգություն ուներ նրանց համար, ում ստեղծել էր, քան Հովնանը մի բանի համար, որը չէր ստեղծել:

Դասեր մեզ համար

- Ե՞րբ ենք աղոթում: Հովնանն առաջնորդության համար չաղոթեց, երբ Հոպպե գնաց: Նա աղոթեց միայն այն ժամանակ, երբ խորը նեղության մեջ էր, երբ ձկան փորում էր: Արդյո՞ք սպասում ենք, մինչև որ դժվարությունների մեջ հայտնվենք, նախքան Աստծուն օգնության համար դիմելը:
- Որքանո՞վ ենք պատրաստակամորեն ընդունում Տիրոջ կամքը մեր կամ ուրիշների կյանքում: Մենք աղոթում ենք՝ ասելով. *«Ըն կամքը լինի, ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»*, բայց արդյո՞ք դա նկատի ունենք:
- Ինչպե՞ս ենք արձագանքում, երբ Աստված օրհնում է այն մարդկանց, որոնք մեր կարծիքով արժանի չեն ողորմության:

Դոն Սթորմը



Ապաշխարություն. շրջվել՝ ճշմարիտ Աստծուն հետևելու համար (2)

Ապաշխարության օրինակներ Նոր Կտակարանից

Հիսուսը առակ պատմեց մի որդու մասին, ով եսասիրաբար պահանջեց իր ժառանգությունը (Ղուկ. 15:11-24): Հետո նա գնաց մի հեռավոր երկիր և վատնեց այն շալլ կյանքի վրա: Ընչազուրկ վիճակը և սաստիկ սովը նրան ստիպեցին զբաղվել խոզարածությամբ: Սակայն նկատելով, որ խոզերն իրենից լավ են սնվում, և գիտակցելով իր սխալը՝ նա որոշեց վերադառնալ հոր մոտ՝ հույս ունենալով, որ հայրը կընդունի իրեն գոնե որպես վարձու ծառայողի: Հայրը ողջունեց նրան տուն վերադառնալիս: Որդին ասաց. «Հայր, մեղանչեցի՝ երկնքի դեմ և քո առջև ու այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»: Բայց հայրն ասաց իր ծառաներին. «Անմիջապես բերե՛ք լավագույն պատմունանք և հագցրե՛ք նրան, մատանի դրե՛ք նրա ձեռքին և կոշիկներ՝ նրա ոտքերին: Բերե՛ք պարարտ հորդթր և մորթեցե՛ք, ուտե՛նք և ուրախ լինե՛նք, որովհետև իմ այս որդին մեռած էր, կենդանացավ, կորած էր ու գտնվեց: Եվ նրանք սկսեցին ուրախանալ»։ Այդ օրը նրանց համար տոն էր: Մեր գործած յուրաքանչյուր մեղք ուղղված է Աստծո դեմ, թեև կարծում ենք, թե դա անվնաս է:

Որդին շրջվեց իր վատ կյանքից, որպեսզի վերադառնա հոր մոտ: Նա համոզված էր իր կյանքի ուղղությունը փոխելու անհրաժեշտության մեջ: Նա խոստովանեց իր ճախողություններն ու սխալները (մեղքերը) հորը և շրջվեց, որ տուն գա (ապաշխարի): Հայրը ներեց նրան և ողջունեց տանը: Նա լավ ժամանակ էր փնտրում ուրիշ տեղերում, բայց այդ ժամանակը գտավ միայն հայրական տանը: Մա ապաշխարության հիանալի օրինակ է:

Աստված նման է առակի հորը, իսկ մենք՝ որդուն, ով ընտրեց իր ճանապարհը: Բայց որտե՞ղ ենք հիմա: Արդյոք դեռ հեռո՞ւ ենք Աստծուց, ինչպես հեռու երկրում: Դուք հոգևորապես մեռա՞ծ եք, կորա՞ծ եք: Եթե այդպես է, ուրեմն լրջորեն մտածե՛ք ձեր վիճակի մասին: Եթե ոչինչ չփոխվի, ապա ամեն ինչ ավելի կվատանա: Դուք կկանգնեք Աստ-

ծո դատաստանի առջև: Ինչո՞ւ չհետևել որդու օրինակին՝ Աստծուն խոստովանելով ձախողություններն ու սխալները (մեղքերը) և շրջվելով դրանցից: Նա ներում կառաջարկի, և դուք կհաշտվեք Իր հետ: Այս գլխում ավելի վաղ ասվում է, որ հրեշտակներն ուրախանում են, երբ մեղավորը շրջվում է (սպաշխարում է) Աստծուն հետևելու համար (Ղուկ. 15:7, 10):

Չաքեոսը կոռումպացված մաքսապետ էր: Թեև նա հարուստ էր, բայց երբ հանդիպեց Հիսուսին, ընդունեց իր մեղավորությունը ու սպաշխարեց՝ հատուցելով նրանց, ում խաբել էր: Նա ասաց. «Տե՛ր, *սեսու ունեցվածքիս կեսն աղքատներին կտամ և եթե մեկին գրպարտությանը գրկել եմ, քառապատիկը կհատուցեմ*» (Ղուկ. 19:8): Դա շրջվելու և հակառակ ուղղությամբ գնալու օրինակ է: Նախկինում նա, որքան հնարավոր է, շատ փող էր վերցնում մարդկանցից: Ազահությունը փոխարինվեց առատաձեռնությամբ: Օրենքը պահանջում էր փոխհատուցել գողացված գումարի մինչև քառապատիկը (Ելից 22:1, 4, 7, Ղևտ. 6:5, Թվ. 5:7, Բ Թագ. 12:6): Դա արմատական փոփոխություն էր:

Իսկ երբ փարիսեցի Մոդոսը Դամասկոսում շրջվեց (փոխեց իր ուղղությունը)՝ հետևելու Հիսուսին, նրա կյանքում արմատական փոփոխություն տեղի ունեցավ: Մինչ այդ նա նախանձախնդիր հրեա էր (Գործք 22:3), որը կտրականապես դեմ էր քրիստոնեությանը (Գաղ. 1, Փիլիպ. 3, Գործք 9:22, 26): Նա դա համարում էր սպառնալիք հրեական հավատքի հանդեպ: Նա իր ժամանակի լավագույն փարիսեցին էր (Փիլիպ. 3:4-6, Գաղ. 1:13-14): Նա հավանություն տվեց Ստեփանոսի՝ առաջին քրիստոնյա նահատակի քարկոծությանը (Գործք 8:1): Նա սպառնալիքներ հնչեցրեց հավատացյալների դեմ, հալածեց նրանց և բանտարկեց (Գործք 8:1-3, 9:1-5, 22:4-5): Նա ուզում էր խանգարել Հիսուսի մասին բարի լուրը տարածելուն և կարծում էր, որ դա վատ լուր է, քանի որ հավատում էր, որ Հիսուսը ստախոս է:

Իր դարձից հետո Միջերկրական ծովի շրջակա երկրներում գտնվող հրեաներին և հեթանոսներին Պողոսը տարածեց Հիսուսի մասին բարի լուրը, հիմնեց ու կառուցեց հավատացյալների ժողովներ: Որպես առաքյալ՝ նա ուղիղ հայտնություններ ստացավ Աստծուց: Նա գրեց նամակներ, որոնք այժմ ներառված են Աստվածաշնչում, և առաջնորդներ պատրաստեց վաղ եկեղեցու համար: Հիսուսից հետո Պողոսն

ամենակարևոր անձնավորությունն էր քրիստոնեության պատմության մեջ: Իր քրիստոնեական հավատքի համար Պողոսը ծեծի ենթարկվեց (Ա Կորնթ. 11:24), բանտարկվեց և նահատակվեց Հռոմի կայսր Ներոնի կողմից: Քանի որ Պողոսը շրջվեց 180 աստիճան՝ Հիսուսին հետևելու համար, նա դարձավ ապաշխարության հիանալի օրինակ: Նրա կյանքում արմատական փոփոխություն եղավ:

Նոր Կտակարանում Աստծուն հետևելու համար շրջվելու երկու տեսակ (ապաշխարություն) կա՝ դիրքային ապաշխարություն, որը տանում է հավիտենական դիրքային ներման, և հարաբերական ապաշխարություն, որը հանգեցնում է ժամանակավոր հարաբերական ներման:

Դիրքային կամ պաշտոնական ապաշխարություն

Քանի որ բոլորը Ադամից և Եվայից ժառանգել են ընթացող բնություն, դիրքային առումով բոլորն Աստծուց բաժանված են: Եվ իրենց ապստամբության (մեղքի) պատճառով նրանք արժանի են Աստծո դատաստանին (Հռոմ. 1:18): Սակայն Աստվածաշնչի բարի լուրն այն է, որ մարդիկ կարող են հաշտվել Աստծո հետ:

Աստված Աբրահամին ասաց. *«Երկրի բոլոր տոհմերը քեզնով պիտի օրհնվեն»* (Ծննդ. 12:3): Իսկ Հին Կտակարանի մարգարեները մարգարեացան, որ Մեսիան կգա՝ փրկելու և իշխելու հրեաներին: Հիսուսն Աբրահամի հետնորդն էր և մասնակի կատարեց Եսայու մարգարեական խոսքերը: Մնացածը կկատարվի, երբ Նա վերադառնա մեծ գործյամբ և փառքով:

Չախտողությունները (մեղքերը) կարող են ներվել: Հիսուսը վճարեց դրանց պատիժը՝ մեռնելով Իր ժողովրդի համար: Նա Իր մահով վճարեց մեր ձախողման (մեղքի) տույժը: Նա վերցրեց Աստծո պատիժը մարդկության ձախողությունների (մեղքերի) համար: Հետևաբար հավատացյալներն ընդունված են Աստծո ներկայության մեջ, որն ակնհայտ դարձավ տաճարի վարագույրի պատռմամբ (Մատթ. 27:51, Մարկ. 15:38, Ղուկ. 23:45):

Պողոսն ասաց. *«Հրեաներին, ինչպես և հույներին վկայություն տվեցի՝ Աստծո առաջ ապաշխարել և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ»* (Գործք 20:21): Դարձը հավասար է ապաշխարություն գումարած հա-

վատք (վստահություն Քրիստոսի կատարածի հանդեպ): Պահանջվում է երկու արձագանք՝ ապաշխարել՝ մտափոխվել ձախողությունների (մեղքի) վերաբերյալ, և վստահել, որ Քրիստոսի գոհաբերական մահը վճարեց մեր ձախողությունների (մեղքի) պատիժը:

Հավատքը Հիսուսին վստահելն է, Նրան հավատալը, փրկության համար միայն Նրան ապավինելը: Իսկական հավատը Հիսուսի հանդեպ ենթադրում է ապաշխարություն (Հռոմ. 6:1-6): Նրանք, ովքեր իսկապես սիրում ու վստահում են Հիսուսին՝ որպես Փրկչի, կհեռանան ձախողություններից (մեղքերից) և կպահեն Նրա պատվիրանները ու կհետևեն Նրան (Ա Հովհ. 5:3):

Ապաշխարությունը դարձի այնպիսի կարևոր կողմ է, որ ավելի հաճախ է շեշտված, քան փրկարար հավատքը (Ղուկ. 15:7, Գործք 11:18): Սա կոչվում է դիրքային ապաշխարություն և ներում, քանի որ Քրիստոսը հավատացյալի բոլոր ձախողությունների (մեղքերի) համար վճարել է: Դա տեղի է ունենում մեկ անգամ և կրկնվելու կարիք չունի:

Ձախողությունը (մեղքը) բաժանում է մեզ Աստծուց և դնում Նրա դատաստանի տակ, և եթե ոչինչ չանենք այս բաժանման և դատաստանի դեմ, արդյունքը վերջնական կլինի, իսկ դժոխքը՝ մեր վերջնական ճակատագիրը: Իսնդիրը լուծելու առաջին քայլը մեր ձախողությունը (մեղքը) ճանաչելն է: Հաջորդ քայլը մեր ձախողությունը (մեղքը) Աստծուն խոստովանելն է: Դա նշանակում է ընդունել, որ սխալ ենք: Հաջորդ քայլը ապաշխարությունն է, որը վարքի փոփոխություն է, որտեղ մեր փոխված վերաբերմունքը դրսևորվում է մեր գործողություններում: Դա նման է մեքենայով շրջադարձ կատարելուն՝ հակառակ ուղղությամբ գնալու համար: Այդ քայլերը տեսնելուց հետո Աստված խոստանում է ներել մեր անցյալի, ներկայի և ապագայի բոլոր ձախողությունները (մեղքերը):

Պետրոսը քարոզեց. «Ապաշխարեցե՛ք և դարձի՛ եկեք, որ ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3:19): Աստված դատավոր է բոլոր նրանց համար, ովքեր երբեք չեն վստահել Իրեն: Այս դիրքային ներումը վերացնում է դրախտի արգելքը: Սա տեղի է ունենում, երբ անհավատը հավատով գալիս է Քրիստոսին: Եթե ընդունում ենք մեր ձախողությունները (մեղքերը) և հավատում ենք, որ Հիսուսը կրել է մեր պատիժը, ապա

համարվում ենք Աստծո զավակներ: Հիսուսը մահացավ մեր բոլոր ձախողությունների և տկարությունների (մեղքերի) համար: Դուք փորձառե՞լ եք նման ներում: Եթե ոչ, ապա ինչո՞ւ չսկսել հետևել Տիրոջը՝ խոստովանելով սեփական ձախողությունները (մեղքերը) և վատահելով Քրիստոսին՝ որպես Փրկչի: Մեր ձախողությունների (մեղքերի) ջնջումից հետո մենք խաղաղություն կունենանք և կհաշտվենք Աստծո հետ: Դրախտը մեր վերջնական ճակատագիրը կլինի, որտեղ կմոռանանք բոլոր ձախողությունները (մեղքերը):

Ճապոնիան և ԱՄՆ-ն թշնամի էին Երկրորդ համաշխարհային պատերազմում: Բայց 1951 թվականին նրանք ստորագրեցին անվտանգության պայմանագիր «հաշտության, խաղաղության համար»: Ինչպիսի՞ տպավորիչ շրջադարձ. նախկինում թշնամիներ, իսկ հիմա ընկերներ ու դաշնակիցներ: Իսկ 2022 թ.-ի փետրվարին Ռուսաստանը ներխուժեց Ուկրաինա, և այժմ պատերազմ է այս երկրների միջև: Ի՞նչ կպահանջվի այս իրավիճակը խաղաղության վերածելու համար: Սա ցույց է տալիս դիրքային ներման հասնելու դժվարությունը:

Ջորջ Հաուր
(Շարունակելի)

*«Ուստի դու՝ որդիս, գորացի՛ր այն շնորհով, որ Քրիստոս Հիսուսով է:
Եվ այն բաները, որ ինձնից լսեցիր շատ վկաներով, նույնն ավանդի՛ր
հավատարիմ մարդկանց, որոնք կարողանան ուրիշներին էլ սովորեցնել:
Իսկ դու նեղությունների տոկսա՛, ինչպես Հիսուս Քրիստոսի լավ զինվորը:
Ո՛չ մի պատերազմող իրեն այս կյանքի գործերի մեջ չի խճճում, որպեսզի
հաճելի լինի նրան, ով իրեն ընտրել է զինվոր լինելու համար:
Եվ եթե մեկը մրցում է, պասկ չի ստանա, եթե օրինավոր չմրցի:
Աշխատող երկրագործը պտուղների առաջին վայելողը պետք է լինի:
Մտածի՛ր իմ ասածի մասին, Տերը թող քեզ իմաստություն տա
ամեն հարցում»:*

Բ Տիմ. 2:1-6

**«Չենք ուզում եղբայրներ՝որ, որ անգետ լինեք...,
որ չտրտմեք, ինչպես ուրիշները, որոնք հույս
չունեն» (Ա թես. 4:13)**

Ստենլին հիանալի ընկեր էր: Նախակրթարանում մենք սովորում էինք նույն դասարանում: Նա միշտ ուներ նոր գաղափարներ, երբեք չէր հուսահատվում և լավագույն ֆուտբոլիստն էր: Այդպիսին եմ հիշում նրան:

Միջնակարգ դպրոցում մենք արդեն սովորում էինք տարբեր դասարաններում: Ես հիշում եմ աստվածաբանության ուսուցչի հետ ունեցած մեր միացյալ դասերը, ով լինելով ճշմարիտ հավատացյալ՝ մեզ հանձնարարում էր խորհրդածել աստվածաշնչյան պատմությունների շուրջ: Երբ այս առարկայի համար նոր ուսուցիչ ունեցանք, մենք, հակառակվելով նրա պնդումներին, պաշտպանում էինք Աստվածաշնչի հեղինակությունը. դա միաբանում էր մեզ:

Երբ Ստենլին տասնյոթ տարեկան էր, նրա մոտ հայտնաբերեցին արյան լեյկոզ: Բժիշկներն ասում էին, որ նրան ապրելու քիչ ժամանակ է մնացել: Բոլորն ապշել էին, իսկ Ստենլին քաջությամբ ընդունեց դա. եթե Աստված հրաշք գործեր և վերադարձներ նրա առողջությունը, նա իր կյանքը կնվիրեր Աստծուն՝ լինելով միսիոներ, իսկ եթե մահանար, ապա Տիրոջ հետ կլիներ, որը դարձել էր նրա Փրկիչը: Սա նրան տալիս էր հանգստություն և վստահություն:

Ես երբեք չեմ մոռանա նրա հուղարկավորությունը: Մեր բազմաթիվ համադասարանցիները և նրանց ծնողները լացում էին: Սակայն նրանց արցունքները հուսահատության արցունքներ չէին: Բոլորը խոսում էին Ստենլիի ձգտումների մասին, լսում էին քարոզը խաչի մասին, որի վրա Տեր Հիսուսը հաղթեց մեղքին, մահին ու սատանային: Իմ համադասարանցիները շատ տպավորված էին: Սակայն արդյո՞ք դա նրանց դրդեց, որ ընդունեն հավիտենական կյանքը, և արդյո՞ք նրանք կհանդիպեն Ստենլիին Երկնքում. դա պարզ կլինի միայն հավիտենականության մեջ:

Քաղված

Առաքելություն Ավետարանի հետ

«Որովհետև ես Քրիստոսի ավետարանն ամոթ չեմ համարում, քանի որ այն Աստծո գործությունն է՝ ամեն հավատացողի փրկության համար, նախ հրեայի, և նույնպես հույնի» (Հռոմ. 1:16)


Աստծո շնորհքով 2024 թ.-ի ուղևորությունը Հայաստան անցավ հարթ: Ես, Հրաչի և Կլարայի (Միդնեյից), Էդմոնի (Ամենոյից՝ Նիդեռլանդներ) և Եզեկիելի (Վալենսիայից՝ Իսպանիա) հետ խորապես օրհնվեցինք մեր երկշաբաթյա այցի ընթացքում, որը սկսվեց օգոստոսի 30-ին:

Խմբի անդամներն առիթ ունեցան Աստծո Խոսքով ծառայելու և հաղորդակցվելու մեր ծառայությանը մի քանի տարի մեծ աջակցություն ցուցաբերած տեղական եկեղեցիներում: Մենք երախտապարտ ենք թարգմանիչներին, ովքեր բազմաթիվ առիթներով ուղեկցել են մեր խմբի ոչ հայախոսներին:

Այս անգամ մեր այցելության նպատակներից մեկն էր ավելի շատ ժամանակ հատկացնել ոչ միայն ընտանիքների այցելությանը, այլև մեր աշխատակիցներին և կամավորներին, ովքեր շարունակում են Տիրոջն անխոնջ ծառայել, հատկապես սահմանային վերջին հակամարտության ժամանակ ունեցած դժվարին ժամանակներում: Մոտ 16 ընտանիքի այցելեցինք:

Հայաստանյան մեր աշխատակիցները խմբի անդամներին խնդրեցին կարդալ աստվածաշնչյան իրենց սիրելի համարը: Ավելի ուշ հասկացանք, որ նրանք հուշանվերներ էին պատրաստել մեզ համար, որոնց վրա գրված էին մեր կարդացած սուրբգրային համարները: Հռոմ. 1:16-ը իմ ընտրությունն էր:

Մենք շարունակում ենք կենտրոնանալ «Ավետարանն աղքատներին հասցնելու» մեր առաքելության վրա՝ առանց ամպելու և այն ուժով, որը միայն Նրանն է: Քաջալերական էր տեսնել մոտ 50 երեխաների և երիտասարդների, որոնք հավաքվել էին Սևահողեր գյուղում՝ Խոսքը լսելու համար: Վերջին մի քանի տարիների ընթացքում բազմիցս այցելել ենք այս տարածք: Խումբը շատ ջերմ ընդունելության

A wooden structure, possibly a watchtower or a small house, is built on a hillside. The background is misty and hazy, suggesting a mountainous or rural landscape. The structure has a thatched roof and is supported by wooden beams. The overall scene is peaceful and somewhat ethereal.

արժանացավ: Սևահողեր նշանակում է «սև հողեր»: Այն, ինչ մենք տեսնում ենք, բերրի հողն է, որն անընդհատ լավ բերք է բերում: Մեր աղոթքն այն է, որ Ավետարանի սերմը, որը հավատարմորեն ցանված է, փառք բերի մեր Տիրոջը:

Այցելեցինք նաև Էջմիածին, Վանաձոր և Գյումրի: Շաբաթօրյա հանդիպումները Գյումրիում շարունակվում են Աշոտի և Հասմիկի հմուտ ղեկավարությամբ: Խոսքի քաղցր տեսանելի է թե՛ երիտասարդների, թե՛ համայնքի մեծահասակների մոտ: Մեր աղոթքն է, որ այս աշխատանքը շարունակի աճել, և որ շատ ավելի մարդիկ Տեր Հիսուս Քրիստոսին հետևեցու որոշումը կայացնեն:

Այս այցելության ընթացքում ուրախանալու ևս մեկ առիթ էր մեր քրոջ՝ Անիի՝ Հայ քրիստոնեական առաքելության տասնամյակը նշելը: Նրա կենսական ներդրումը մեր հաշվապահական բաժնում առիթ հանդիսացավ, որ հավաքվենք շնորհակալական ճաշի:

Մեր աշխատակիցներն անհամբեր սպասում են դեկտեմբերին Սողոմվա այցելելուն: Նրանք օգնելու են սուրբծննդյան ամենամյա ծրագրին, որը կազմակերպում են եղբայրները Christian Mission International Aid-ում (CMIAID):

Մենք իսկապես երախտապարտ ենք տարիների ընթացքում ձեր աղոթքների և գործնական աջակցության համար: Խնդրում ենք աղոթել մեր աշխատակիցների առաջիկա մի քանի շաբաթների ծառայության և մեր Տիրոջ վրա կետրոնանալու համար:

Դուկո.՝ Դանիել Ջեյմս

